

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԱՐՑԱՆ ՀԷԿ» ԲԲԸ

ԱՀ, ք. Ստեփանակերտ, Վազգեն Մարգարյան 25ա

Հեռ. (+374 47) 94 28 58, ֆաքս (+374 47) 97 42 14

Էլ. փոստ՝ info@artsakhhek.am

Ինտերնետային կայք՝ www. artsakhhek.am

Հաշվետվություն թիվ 2, 14.05.21թ

Սույնով տեղեկացնում ենք, որ 2021 թվականի մայիսի 11-ին կայացել է «ԱՐՑԱՆ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի նիստ:

Ստորև ներկայացվում են տնօրենների խորհրդի կողմից ընդունված որոշումները (նիստի արձանագրությունը կազմվել է 11.05.21թ-ին):

Վ. Բեգլարյան

  
(ստորագրություն)



«ԱՐՑԱՆ ՀԷԿ» ԲԲԸ

Գլխավոր տնօրեն

14.05.2021թ.

# «ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

## ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

### ՈՐՈՇՈՒՄ

«11» մայիսի, 2021թ

N 2-2021

ք.Ստեփանակերտ

Հիմք ընդունելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ԱՀ օրենքի 84-րդ հոդվածը, «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության կանոնադրության 12.4 կետը և «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհրդի 11.05.2021թ. նիստի N2-2021 արձանագրությունը՝ «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության տնօրենների խորհուրդը որոշում է՝

1. 2021թ. հունիսի 21-ին ,Ժամը 11:00-ին, ԱՀ, ք. Ստեփանակերտ, Վազգեն Սարգսյան 25ա հասցեում գումարել «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողով:  
Բաժնետերերի տարեկան ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմել 2021թ. մայիսի 17-ի, ժամը 9:00-ի դրությամբ՝ Ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա:
2. Հաստատել «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության ընդհանուր տարեկան ժողովի օրակարգը՝ համաձայն հավելվածի:
3. Հաստատել «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության ընդհանուր տարեկան ժողովի քվեաթերթիկի ձևը և բովանդակությունը՝ համաձայն հավելվածի :
4. «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության ընդհանուր տարեկան ժողովին առաջարկել «Ֆոր ԷՅ Քնսալթինգ» ՓԲԸ-ն որպես 2021թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող կազմակերպություն:
5. Հանձնարարել Ընկերության գլխավոր տնօրենին ապահովել սույն որոշմամբ նախատեսված աշխատանքների իրականացումը :
6. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2021 թվականի մայիսի 11-ից:

Խորհրդի նախագահ՝

Ա. Բալայան